

Սյունյաց Երկիր

www.syuniacyerkir.am



Մեղրիի ենթադրյալ միջանցքի շնորհիվ Սյունիքի երկաթուղային ճանապարհների վերագործարկման շահավետության գաղափարը մի՞Ք է, ուղեղային մորմոք եւ մեծ սուտ

Մեղրու ենթադրյալ միջանցքին առնչվող հարցերին (կապիտուլյացիայից հետո) անդրադարձել ենք քանիցս: Եվ դեռ անդրադառնալու ենք, քանզի Մեղրիով թուրքերի միջանցք տրամադրելը Սյունիքի անդամահատում է նշանակում, ինչպես եւ Մեղրիի տարածաշրջանում հայոց ինքնիշխանության գոյացում, հայոց հարավային ու միակ դուռը թշնամի տերություններին նվիրաբերում:

Եվ որպեսզի հայրենադրության այդ գաղափարը կյանքի կոչվի առանց սյունեցիների դիմադրության, ինչ որ ծնծղաներ՝ թուրքի սպասավոր դարձած, փորձում են Սյունիքում կարոտախտ բորբոքել երկրամասի երբեմնի երկաթուղային հնարավորությունների օգտակարության հանդեպ: Փորձում են պատրաստել հյուսել՝ կապված Մինչեւեւ-Կապան եւ Մինչեւեւ-Մեղրի-Ջուլֆա

երկաթգծերի հնարավոր վերագործարկման եւ դրանից բխող շահավետության հետ: Ու այդ ամենի արդյունքում «պահանջված համարել» Մեղրիի միջանցքի ստեղծումը...

Չափազանց կարեւոր այդ հարցի վերաբերյալ Սյունիքում կա հստակ դիրքորոշում, որը կուզենայինք ներկայացնել:

Սյունիքում, անշուշտ, չեն մոռացել, որ հատկապես երկաթուղային ճանապարհների շնորհիվ է խորհրդային տարիներին երկրամասի տնտեսությունն աննախադեպ զարգացում ապրել: Մի քանի փաստ՝ ահավասիկ:
Առաջին. Հայրենական մեծ պատերազմի տարիներին (1941-45թթ.) կառուցվեց Ջուլֆա-Մինչեւեւ երկաթուղին, որով կապ հաստատվեց Մեղրու տարածաշրջանի եւ Երեւանի միջեւ (Մասիս-Ջուլֆա եւ Մասիս-Երեւան երկաթուղիները կառուցվել էին դեռեւս 1902-ին): Ասել է թե՛ մեծ հայրենական տարիներից

սկսած Երեւան-Բաբու երկաթուղային կապն իրականացվել է Մեղրիի տարածքով:

Եվ պատերազմի տարիներին, եւ հետո այդ երկաթուղին մեծ դեր է խաղացել Մեղրիի տնտեսության կազմակերպման եւ զարգացման գործում:

Երջանկահիշատակ Դավիթ Մաթեոսյանն էր ասում՝ երկաթուղու գործունեության վերջին տարիներին յուրաքանչյուր ուղևորությամբ այդ երկաթգծով օրական անցնում էր 20-23 շարժակազմ. ամեն մի շարժակազմի բեռնավորված վագոնների նվազագույն քանակը 50-ից ավելի էր: Սյունյացի այդ երկաթգծի շնորհիվ մեղրեցիները կարողանում էր հնարավորինս արագ եւ առանց դժվարությունների կապ պահպանել Հայաստանի կենտրոնական շրջանների հետ:

Երկրորդ. Մինչեւեւ-Ղափան երկաթուղին գործարկվեց 1932 թվականին: Այդ երկաթուղու շնորհիվ Կապանը խորհրդային տարիներին դարձավ Հայաստանի հարավարեւելյան տարածաշրջանի ամենախոշոր եւ ժամանակակից քաղաքը:

Շարունակությունը՝ էջ 3

ԱԳ նախարարության հայտարարությունը

Հայաստանի Հանրապետության ԱԳ նախարարությունը դիվանագիտական խողովակներով Ադրբեջանի ԱԳ նախարարությանը փոխանցել է, որ Հայաստանի Հանրապետությունն ընդունում է «Հայաստանի Հանրապետության և Ադրբեջանի Հանրապետության միջև խաղաղության և միջպետական հարաբերությունների հաստատման մասին համաձայնագրի» նախագծի չհամաձայնեցված երկու հոդվածների վերաբերյալ Ադրբեջանի առաջարկությունները և առաջարկել է հանդես գալ համատեղ հայտարարությամբ՝ Խաղաղության համաձայնագրի նախագծի տեքստի համաձայնեցված լինելու և նախագծի համաձայնեցման շուրջ բանակցությունների ավարտի մասին:
Պաշտոնական Բաբուն նախընտրել է

հանդես գալ միակողմանի հայտարարությամբ: Հայաստանի Հանրապետության ԱԳ նախարարությունը հաստատում է «Հայաստանի Հանրապետության և Ադրբեջանի Հանրապետության միջև խաղաղության և միջպետական հարաբերությունների հաստատման մասին» համաձայնագրի նախագծի համաձայնեցված լինելու և նախագծի համաձայնեցման շուրջ բանակցությունների ավարտի փաստը:
Այսպիսով, Խաղաղության համաձայնագիրը պատրաստ է ստորագրման: Հայաստանի Հանրապետությունը պատրաստ է Ադրբեջանի Հանրապետության հետ սկսել խորհրդակցություններ Համաձայնագրի ստորագրման ժամկետների և տեղի շուրջ:
13 ՄԱՐՏԻ, 2025



Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ խաղաղության համաձայնագրի նախագիծը համաձայնեցված է եւ սպասում է ստորագրման: Ես պատրաստ եմ իմ ստորագրությունը դնել այդ փաստաթղթի ներքո:

Նիկոլ Փաշինյան

Սյունիքի հայաթափման թուրքական պլանը ձախողելու համար...

Իրանի համար Սյունիքով միջանցքի տրամադրումն Ադրբեջանին և Թուրքիային անընդունելի է և կարմիր գիծ: Նման միջանցքի բացումը բերելու է շատ կարճ ժամանակահատվածում ամբողջ Սյունիքի հայաթափման, որն էլ Թուրքիայի և Ադրբեջանի իրական նպատակն է: Այդ մասին ասել է իրանագետ, Կովկասի հարցերով ավագ փորձագետ Մաջիդ Զարիմին:

«Այս պարագայում Սյունիքի հայաթափում է ստացվում, դուր՝ հայերը, ի՞նչ է, լավ չէ՞ք ճանաչում Թուրքիայի մտածելակերպը: Իրանի համար այս հարցը կարմիր գիծ է, որը որևէ դեպքում չի փոխվելու: Ադրբեջանին և Թուրքիային ճանապարհ տալուց առաջ Հայաստանի իշխանությունը պետք է այդ ճանապարհի նշանակությունը շատ մանրամասն ուսումնասիրի: Սյունիքի մարզի աշխարհաքաղաքական տեղն ու դիրքը տարբերվում են մյուս ճանապարհներից: Դա է պետք հասկանալ: Թե՛ օսմանցիները, թե՛ Բաբուի մուսավաթները մշտապես հարձակումներ են գործել Մեղրիի տարածաշրջանի վրա և առ այս պահն ունեն նման նկրտում, հետևապես՝ այդ ճանապարհին տիրանալու պարագայում կրկնվելու է Արցախի ճակատագիրը: Հիշե՛ք, որ Թուրքիան և Ադրբեջանը հարձակվեցին Արցախի վրա, բայց խոստացան, որ Արցախի ժողովրդի հետ գործ չեն ունենալու, իսկ 3 տարի անց տեսանք, թե՛ ինչ պատահեց: Նույնը կրկնվելու է Սյունիքում», – ասաց Կովկասի հարցերով փորձագետը:

Վերջինիս խոսքով՝ հայկական կողմը թուրքական մտածեակերպը լավ չի ճանաչում, մի՞թե տեսանելի չէ, որ եթե ճանապարհը բացվի՝ թուրքերը կգան, այդ ճանապարհի վրա կիրականացնեն զինված գործողություններ:

«Թուրքիան անմիջապես այդ պատրվակով գորք կմտցնի այդ տարածք», – շեշտեց Մաջիդ Զարիմին:

Որո՞նք պետք է լինեն Հայաստանի քայլերը՝ կանխելու Սյունիքով միջանցքի՝ ռազմական ճանապարհով բացումը՝ հարցին ի պատասխան, իրանագետը նշեց մի քանի քայլ, որոնք Հայաստանի պարագայում պարզապես անհրաժեշտություն են՝ թուրք-ադրբեջանական ռազմական նկրտումներն ու Հայաստանի հարավի անեքսիան թույլ չտալու համար:

«Հայաստանը պետք է առաջարկի Իրանին՝ շտապ ռազմական համագործակցության վերաբերյալ պայմանագիր կնքել, մասնավորապես՝ Սյունիքում համատեղ գործունեություն ծավալելու համար: Երկրորդ կետով՝ Հայաստանը պետք է դիմի Իրանին՝ Սյունիքում ռազմաբազա տեղակայելու խնդրանքով: Երրորդ կետով պետք է Սյունիքում ստեղծել տնտեսական զարգացման գոտիներ»:

Հիշեցնենք, որ Մաջիդ Զարիմին իրանագետ է, Կովկասի հարցերով ավագ փորձագետ:

Քարիմին ակտիվորեն մասնակցել է միջազգային գիտաժողովների՝ ներկայացնելով զեկույցներ՝ նվիրված, մասնավորապես, Լեռնային Ղարաբաղի հակամարտության աշխարհաքաղաքական ազդեցությանը, Մուղանի պատմությանը և նրա խորհրդային Հանրապետությանը, ինչպես նաև Իրանի և Հայաստանի մշակութային հատման կետերին:
14.03.2025 Թ.

Ներքին Յանդում ճշտում են՝ թուրք վանդալները պղծել են գյուղի՝ Մեծ հայրենականի գոհերին նվիրված հուշարձանը



Մի քանի օր է՝ Կապանում խոսակցություններ են շրջանառվում այն մասին, թե թուրքերն ապամոնտաժել են Ներքին Յանդ գյուղի հուշարձանը՝ նվիրված Մեծ հայրենականում զոհված 48 համազորացիներին:

Այսօր հեռախոսազրույց ունեցանք Ներքին Յանդի վարչական ղեկավար Խաչատուր Բաղդասարյանի հետ՝ հուշարձանին առնչվող խոսակցությունների հավաստիությունը պարզելու համար:

Նա մասնավորապես ասաց՝ «Մոտ մեկ ամիս է՝ Մեծ հայրենականում զոհված համազորացիների հիշատակը հավերժացնող հուշարձանը չի երևում, ինչը սովորաբար դիտարկելի էր հենվից: Բայց փորձում ենք ավելի ստույգ տեղեկատվություն ստանալ: Կարծում եմ առաջիկա ժամերին այդ տեղեկատվությունը կունենանք»:

Ի դեպ, թշնամին բռնագավթել է Նաև գյուղի գերեզմանոցը, գյուղի խմելու ջրի ակունքները և մերձակա անտառները: Իսկ մենք... Մենք անցած երեք տարվա ընթացքում ոչինչ չենք արել և ոչինչ չենք անում Սյունիքի հարավ-արևելյան դարպասը՝ ռազմավարական բացառիկ Նշանակությամբ, ազատագրելու համար:

19.03.2025Թ.

Գյուղի այդ տարածքը թշնամին բռնագավթել էր 2022 թ. մարտի առաջին օրերին՝ չհանդիպելով որևէ դիմադրության:



Սյունիքի օրվա մարզպետին, ԱԺ սյունեցի (ԲՊ-ական) պատգամավորներին

Ռոբերտ Ղուկասյան, Արմեն Խաչատրյան, Կարեն Համբարձումյան, Դավիթ Դանիելյան, Նարեկ Դահրամանյան, Մարինե Ղազարյան, ձեզ ենք դիմում...

ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի երեկ՝ մարտի 13-ին, հնչեցրած մտքերը՝ Մեղրու տարածաշրջանով Ադրբեջանին և Թուրքիային ճանապարհի տրամադրելու պատրաստակամության մասին, տարակույսների տեղիք է տվել Սյունիքում:

Հիմա, հատկապես սյունիքաբնակներիս համար, առնվազն երկու հարց է առաջ եկել՝

ա) Ի՞նչ է իրականում կատարվում Մեղրու տարածքով Ադրբեջան-Թուրքիա ճանապարհի բացման առնչությամբ (իրերը կոչենք իրենց անուններով), բ) Ի՞նչ անել ստեղծված իրավիճակում:

Մեր անկախիքները ձեզանից՝ այդ հարցերի վերաբերյալ:

1. Ձեր միասնական պարզաբանումն առ այն, թե ի՞նչ է նախատեսվում կամ կատարվում Մեղրու տարածքով Ադրբեջան-Թուրքիա ճանապարհի բացելու ուղղությամբ:

2. 2020-ի կապիտուլյացիայից ի վեր Սյունիքը քանիցս անդամահատվել է...

Կորցրել ենք Շուռնուկի արևելյան հատվածը, կորցրել ենք Մեծ Իշխանասարն ու Նրա մատույցները, կորցրել ենք Սև լճի արևելյան հատվածն ու Գյուլի Ձագեճորը լեռնագագաթը,

կորցրել ենք տարածքներ Տեղ գյուղի արևելյան մասում և Գորայքից հյուսիս ընկած արոտավայրերում, կորցրել ենք Գորիս-Կապան և Կապան-Ճակատեն, ինչպես և Կապան-Եղվարդ ճանապարհները, կորցրել ենք Ներքին Յանդի գրեթե ամբողջ շրջակայքը, կորցրել ենք Սյունիքի արևելյան սահմաններին իշխող գրեթե բոլոր բարձունքները...

Հիմա, օրինակ, ոչ ոք չայաստանում չգիտի, թե Սյունիքի մարզից քանի քառակուսի կմ է մնացել հայոց ինքնիշխանության ներքո:

Եվ դուք, որպես երկրի գործող իշխանության օրվա ներկայացուցիչներ Սյունիքում կամ Սյունիքից, ոչ մի անգամ և ոչ մի պարագայում սեփական կարծիք կամ դիրքորոշում չեք հայտնել այդ բռնագավթումների կապակցությամբ:

Գոնե այս անգամ, գոնե մեկ անգամ հայտնեք ձեր դիրքորոշումը՝ Մեղրու շուրջ ենթադրյալ զարգացումների վերաբերյալ:

3. Իսկ եթե գործընթացին տեղյակ չեք կամ տեղեկատվության չեք տիրապետում՝ կարող եք միասնաբար ընդունելության գնալ ՀՀ վարչապետի մոտ և նրանից տեղեկատվություն ստանալ կամ պարզաբանում պահանջել, նաև հավելյալ տեղեկություններ ներկայացնել Մեղրու և ընդհանրապես Սյունիքի ռազմավարական նշանակության մասին:

Հարկավոր է նաև հիշեցնել, որ միայն վերջին

հարյուր տարում քանիցս փորձ է արվել (օսմանցիների, մուսաֆաթականների, կոմունիստների կողմից)՝ Մեղրիով Ադրբեջանի ու օկուպացված հայկական Նախիջևանի (ուրեմս և՛ Թուրքիայի) միջև ճանապարհի բացելը:

Անգամ Ստալինի օրերում Գրիգոր Հարությունյանը համարձակվել է մերժել այդ նախագիծը:

Թուրք-ադրբեջանական այդ ձգտումը մերժել են հաջորդ ղեկավարները՝ Սուրեն Թովմասյանը, Յակով Զարոբյանը, Անտոն Քոչինյանը, իսկ Կարեն Դեմիրճյանն ուղղակի «թեքել» է Յեյրարի ճակատին:

Համոզված ենք՝ կարող եք հանդիպել վարչապետին և քննարկել բոլոր վտանգները, որ օրերի հեռվում սպասվում են Սյունիքին՝ նման ճանապարհի բացելու դեպքում:

Ժամանակները ցույց տվեցին, որ ձեզանից առնվազն երկուսը, օրինակ, կարող են բացել երկրի ամենաբարձր դռները և իրենց մերժող պաշտոնյային թախտընկեց անելու համար նույնիսկ կառավարության որոշում ընդունել տալ՝ բանեցնելով եղկության, բնության ու բանասարկության հեթաթային հնարքներ:

Գոնե մի անգամ էլ այդպիսի հետևողականություն դրսևորեք Սյունիքի հարցում:

4. Եվ եթե ակնկալվող պարզաբանումները, բացատրությունները ձեր սրտով լինեն՝ անպայման հանդես եկեք հայտարարությամբ և ձեր հիմնավորումներով փորձեք համոզել մեզ:

Կարծում ենք (ձեզ մի քիչ ճանաչելով հանդերձ)՝ մեր պատմության բախտորոշ այս հանգրվանում իրավունք չունեք որդեգրել անկերպարանք ուրուի վարքագիծ:

Միայն թե չասեք՝ վարչապետն օրեր առաջ հողված է գրել «Հայաստանի և Ադրբեջանի միջև հաղորդակցության ուղիների մասին», որին ծանոթ ենք, որում, օրինակ, բացված չէ ավելի վաղ արված հայտարարությունը, թե ենթադրյալ ճանապարհին գործելու է «պարզեցված կարգ»:

Իսկ եթե համաձայն չլինեք վարչապետի դիրքորոշմանը, ապա կարող եք (ձեր հայեցողությամբ) այլ քայլեր ձեռնարկել:

Մեր կարծիքով՝ հնարավոր ամենաճիշտ քայլը կլիներ այն, որ վայր դնեիք ձեր մանդատները և հեռանայիք ասպարեզից:

Հրաժարականի դեպքում չի տուժի Սյունիքը, քանի որ տարիների ընթացքում երկրամասի վերաբերյալ գոնե մեկ հիմնախնդիր չեք բարձրացրել, սյունիքապատ որևէ օրինագծի հեղինակ կամ համահեղինակ չեք եղել:

Բայց հրաժարականով կստիպեք բոլորին, որ Մեղրուն առնչվող վտանգավոր այդ ծրագրին ավելի լուրջ վերաբերվեն և՛ երկրում, և՛ դրսից մեզ գործողություններ պարտադրողները:

Իհարկե, կարող եք նաև այլ քայլեր ձեռնարկել՝ հնարավոր սպառնալիքը կասեցնելու համար:

Միայն չասեք, թե մենք խաղաղության կողմակից չենք. աշխարհում երևի չկա մի անկյուն, որ սյունեցիներիս չափ խաղաղություն փափագի: Բայց մենք արժանապատիվ խաղաղությունը նկատի ունենք:

Միայն չասեք, թե մենք դեմ ենք հաղորդակցության ուղիների վերաբացմանը, քանզի Ադրբեջանի արևմտյան շրջանները Նախիջևանի հետ կապելու այլ ուղիներ էլ կան, որոնց մասին, ցավոք, ոչ ոք չի խոսում:

Միայն չասեք, թե մեր առաջարկություններն ընդդիմադիր դիրքերից են, քանզի (մեր ընկալմամբ ու կարծիքով) հայոց պետության և հայոց հող ու ջրի հանդեպ ընդդիմադիր են բացառապես նրանք, ովքեր հազարամյակներով փակ ու աննկաճ դուռը բացում են թշնամական պետությունների առջև: Ընդդիմադիր արտահայտությունն այլ բացատրություն չունի հայոց բառագիտության մեջ:

Առայժմ այսքանը:

ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ
14.03.2025

Կարևորում ենք ՀՀ պետական մարմինների և համահայկական կառույցների ջանքերի մեկտեղումը՝ Բաբվում պահվող հայերի ազատ արձակմանը հասնելու համար. Գերագույն Յոզևոր Խորհուրդ

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Ա.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի նախագահությամբ գումարված Գերագույն Յոզևոր Խորհրդի ժողովը, անդրադառնալով Արցախի քաղաքական դեկավարության, զինվորականների և քաղաքացիական անձանց նկատմամբ Ադրբեջանում իրականացվող շինծու դատավարություններին, հանդես եկավ հայտարարությամբ.

«Գերագույն Յոզևոր Խորհուրդը արձանագրում է, որ Ադրբեջանում անազատության մեջ ապօրինաբար պահվող հայ գերինների և պատանդների նկատմամբ արարքները հայ ժողովրդի և Հայաստանի Հանրապետության դեմ ադրբեջանական իշխանությունների շարունակվող թշնամանքի և ագրեսիայի հերթական դրսևորումներն են:

Ակնհայտ է, որ Միջազգային իրավունքի հիմնարար սկզբունքների բացահայտ խախտումներով ընթացող դատավարությունը ուղեկցվում է գերինների խոշտանգումով և անմարդկային վերաբերմունքով: Անթաքույց նպատակ է հետապնդվում հիմնովին խեղաթուրելու Արցախի ժողովրդի ինքնորոշման իրավունքի իրացման պատմությունը՝ միտում ունենալով նվաստացնել մեր ժողովրդին ու հայոց պետությանը: Անտեսելով միջազգային հանրության հորդորներն ու պահանջները՝ ադրբեջանական իշխանությունը փորձ է անում ոչ միայն քողարկելու, այլև արդարացնելու իր իսկ սանձազերծած ցեղասպանության և պատերազմական հանցագործության անհերքելի փաստերը, ինչպես նաև զոհերին ներկայացնելու իբրև ոճրագործներ:

Հինծու դատավարություններով և հայ գերինների խոշտանգումներով կորզված կեղծ ցուցմունքների միջոցով ադրբեջանական իշխանությունները փորձ են անում հեռահար նենգ նկրտումներով դատավճիռներ ապահովել, նախադրյալներ ստեղծել Հայաստանի Հանրապետության և հայ ժողովրդի նկատմամբ նոր պարտարանքներ և ագրեսիայի հայկական եկեղեցիների միացյալ ներկայացուցիչները միասնաբար դիմել են աշխարհի քրիստոնյաներին՝ Ադրբեջանում կալանքի տակ պահվող ռազմագերիներին ու քաղաքացիական անձանց անհապաղ և անվերապահորեն ազատ արձակելու հրատապ կոչով:

Բաց նամակ-հրատապ կոչ՝ աշխարհի քրիստոնյաներին. հանուն մեր ընդհանուր հավատքի՝ աջակցե՛ք հայ գերինների ազատ արձակմանը

Այն արտահայտում է խորը հավատարմությունը քրիստոնեական արժեքներին և մարդկային արժանապատվությանը, ընդգծում խաղաղության ու հաշտեցման հրատապ անհրաժեշտությունը: Կոչն ընդգծում է բռնությունը և անմարդկային վերաբերմունքը դադարեցնելու կարևորությունը, անկախ ազգությունից, բոլոր մարդկանց բնածին արժանապատվության հանդեպ հարգանքի դրսևորումը:

Հայաստանի և Ադրբեջանի միջև տևական խաղաղության ճանապարհը կարող է հարթվել միայն մարդասիրական խնդիրների լուծման՝ ռազմագերիների և այնտեղ պահվող քաղաքացիական անձանց հայրենադարձման միջոցով:

Ստորև ներկայացված է նրանց նամակ-կոչը, որն ստորագրել են հարյուրից ավելի հոգևորականներ. Միքելի քոյրեր և եղբայրներ ի Քրիստոս, Մենթե՝ աշխարհի հայկական եկեղեցիների ներկայացուցիչներս, միասնաբար դիմում ենք Ադրբեջանում պահվող հայ ռազմագերիներին ու քաղաքացիական անձանց անհապաղ և անվերապահորեն ազատ արձակելու այս խնդրանքով:

Սա պարզապես անմեղ մարդկանց ազատ արձակելու կոչ չէ, այլ, արդարության, արժանապատվության և մարդկության վերականգնման խնդրանք: Այս անձինք,



սիա սանձազերծելու համար: Սրան զուգահեռ, ամեն ինչ արվում է արգելափակելու համար միջազգային փաստաբանների և միջազգային կազմակերպությունների այցերը հայ գերիններին: Նրանք գրված են նաև հոգևոր խնամքից օգտվելու տարրական հնարավորություններից:

Այս պայմաններում մեծապես կարևորում ենք Հայաստանի պետական մարմինների և համահայկական կառույցների ջանքերի մեկտեղումը՝ հայ գերինների և պատանդների նկատմամբ բռնություններով ուղեկցվող ապօրինի գործողությունները դադարեցնելու և գերինների ազատ արձակմանը հասնելու համար:

Յորդորում ենք Հայաստանի իշխանություններին նախաձեռնել գործուն և նկարավորին տեսանելի քայլեր՝ այս նպատակի իրագործմանը ծառայեցնելու հայկական ու միջազգային շրջանակների բոլոր հնարավորություններն ու ամբողջ ներուժը:

Կոչ ենք ուղղում նաև ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահող երկրների առաջնորդներին, մարդու իրավունքների պաշտպանության մանդատ ունեցող միջազգային կազմակերպություններին ու նրանց ղեկա-

վարներին՝ առավել ազդու միջոցներ կիրառել Ադրբեջանի նկատմամբ՝ հայ գերինների անհապաղ հայրենադարձելու համար: Տարածաշրջանում կայուն, երկարատև խաղաղություն և սերունդների համար արժանապատիվ գոյակցության պայմաններ կարելի է ապահովել միայն առկա հիմնախնդիրների արդար հանգուցալուծման և արցախահայության իրավունքների իրացման պարագայում:

Ադրթթով առ Բարձրյալը զորակցություն ենք հայտնում գերեվարված սիրելի մեր զավակներին՝ պատգամելով գերծ մսալ բողոքի այնպիսի գործողություններից, որոնք անմիջական սպառնալիքներ կարող են ստեղծել իրենց կյանքի և առողջության համար: Մեր հորդորն է սիրելի Ռուբեն Վարդանյանին՝ դադարեցնել հացադուլը և ամուր հավատով շարունակել պայքարել հանուն ազատ ու արժանապատիվ կյանքի իրավունքի:

Մեր հայցն ենք վերառաքում առ Աստված բոլոր գերյալների, նեղյալների և նրանց ընտանիքների համար՝ խնդրելով Տիրոջ օրհնությունն ու օգնականությունն ամենախնայալ: **12.03.2025 Թ.**

և որտեղ յուրաքանչյուր մարդկային հոգի ապրում է ազատության մեջ:

Մենք՝ աշխարհաբախյալ հայկական եկեղեցիներս, պահանջում ենք բոլոր ռազմագերիների և քաղաքացիական պահվող անձանց անհապաղ վերադարձնել իրենց ընտանիքներ: Սա զուտ մարդասիրական անհրաժեշտություն չէ, սա բարոյական հրամայական է: Հայ գերինների ազատ արձակումը կարող է բացել նոր էջ, որտեղ առողջացումը կփոխարինի ատելությանը, որտեղ հասկացողությունը կհաղթահարի բաժանարարությունը, որտեղ խաղաղությունը պարզապես երազանք չէ, այլ իրականություն:

Մենք կոչ ենք անում կառավարություններին, միջազգային կազմակերպություններին և բոլոր բարի կամքի տեր մարդկանց՝ դատապարտել ցուցադրական այս դատավարությունը՝ որպես քաղաքական և ոչ լեգիտիմ, և ճնշում գործադրել դրանում ներգրավված իշխանությունների վրա՝ վերադարձնելու այս անմեղ մարդկանց իրենց հարազատ տները: Երես մի թեթեք այլոց տառապանքներից: Կանգնե՛ք մեր կողքին: Կանգնե՛ք հանուն արդարության և խաղաղության:

Թող որ ճշմարտության, կարեկցանքի ու արդարության լույսն ուղղորդի բոլորիս դեպի մի աշխարհ՝ ուր չկան շղթայվածներ, ուր յուրաքանչյուր մարդկային կյանքն արժենալով է, ուր խաղաղությունը միմիայն խոսք չէ, այլ՝ ապրող իրողություն, Անսասան հավատքով ու համերաշխությամբ... **ՆԱՄԱԿԸ ՍՏՈՐԱԳՐԵԼ ԵՆ ՀԱՐՅՈՒՌԻՑ ԱՎԵԼԻ ՅՈՑԵՎՈՐԱՆԸ 10.03.2025**

Մեղրիի ենթադրյալ միջանցքի շնորհիվ Սյունիքի երկաթուղային ճանապարհների վերագործարկման շահավետության գաղափարը մի՛Ֆ է, ուղեղային մորմոք եւ մեծ սուտ

Սկիզբը՝ էջ 1

Ըստ մեր ունեցած տեղեկությունների՝ շրջանի ժողովրդատնտեսական բեռների մոտ 95%-ը Ղափան էր ներկրվում երկաթուղային տրանսպորտով: Տարբեր նշանակության բեռներ էին տեղափոխվում Գորիսի ու Սիսիանի շրջանների համար:

Ղափանի երկաթուղային կայարանի միջոցով իրականացվող բեռնափոխադրումների ծավալի մասին պատկերացում կազմելու համար բերենք մեկ օրինակ՝ 1986 թ. 1-ին կիսամյակում առաքվել է 3041 վագոն, սպառող կազմակերպություններին են առաքվել 34680 տոննա ժողովրդատնտեսական բեռներ:

Իսկ ուղեւորափոխադրումները... Ըստ Վահրամ Օրբեյանի՝ «Միջին եւ ավագ սերնդի մարդկանց հիշողության մեջ տակավին թարմ է մնացել երկաթուղային կայարանի աշխույժ եռուզեռն առավույվա (երբ զնացք ժամանում էր Կապան) եւ երեկոյան (երբ զնացք մեկնում էր մայրաքաղաք) ժամերին եւ վազոնների ու ռեյսերի բախումից առաջացած համաչափ զվզզոցը...»: * * *

Մեղրու եւ Կապանի երկաթուղային կայարանների գործունեությունն արտացոլող (վերոնշյալ) փաստերը բավական են՝ համոզվելու, որ Սյունիքն ընդգրկող շրջանների կյանքն այդ ժամանակ առանց երկաթուղային տրանսպորտի հնարավոր չէր պատկերացնել:

Եվ ուրեմն՝ որեւէ մեկը չի պատրաստվում հերքել կամ հարցականի տակ դնել պատմական այդ իրողության ճշմարտացիությունը, սակայն...

Մեղրու եւ Կապանի երկաթուղային կայարանների գործունեությունը, Սյունիքի երբեմնի երկաթուղային ճանապարհներն ընդամենը հուշ են, գեղեցիկ հուշ...

Եվ գեղեցիկ այդ հուշը տվյալ ժամանակաշրջանում իրականություն է եղել բացառապես այն հանգամանքի շնորհիվ, որ եւ Հայաստանը, եւ Ադրբեջանը միեւնույն պետության՝ Խորհրդային Միության մեջ էին: Ու սյունիքյան երկաթուղիները մեկ պետության միասնական երկաթուղային ցանցի փոքրիկ բաղադրիչն էին...

Եվ երբ 1991-ին փլուզվեց Խորհրդային Միությունը, փլուզվեց նաեւ երկաթուղային միասնական ցանցը, այդ թվում՝ դադարեցին գործել Սյունիքի երկաթուղային ճանապարհները:

Ավելին, երկաթուղային այդ ճանապարհները որոշ ժամանակ լրջագույն խնդիրներ էին առաջացնում Սյունիքում:

Այսպես՝ Նախիջեւանով եւ Չանգեյանով անցնող Կապան-Երեւան եւ Երեւան-Կապան գնացքները պարբերաբար ենթարկվում էին հարձակումների, թալանվում էին ապրանքատար գնացքները:

1991-ի սեպտեմբերին ադրբեջանցիները դիմեցին ծայրահեղ ստորության՝ կանգնեցնելով Կապան-Երեւան գնացքը՝ պատանդ վերցրին 14 հոգու եւ գերության մեջ պահեցին 35 օր: Նրան դեպքեր պատահել են մի քանի անգամ...

Գրեթե նույն վիճակն էր երկաթուղու Մեղրու հատվածում: Ըստ Ղափիթ Մաթեսյանի՝ 1992-ի սկզբին Նախիջեւանում պարբերաբար զավթում էին հայկական բեռները:

Նույն տարվա ամռանը Մինջեւանում մնացած իրանական բեռները, որ պետք է Մեղրիով տեղափոխվեին Տուլֆա, արդեւանցիների կողմից թալանվեցին...

Պղինձը կհավասարվի՞ նավթին. Վարդան Չհանյանը՝ հանքարդյունաբերության դերի ու կառավարության դիրքորոշման մասին

Ամուլսարի հանքավայրի շահագործման մեկնարկից հետո Հայաստանում Չանգեզուրի պղնձամուլիբդենային կոմբինատի հետ համեմատելի ևս մեկ հանքարդյունաբերական ձեռնարկություն կգործի: Դրա մասին Economix հաղորդման շրջանակում հայտարարել է ՀՀ հանքագործների և մետալուրգների միության նախագահ, Չանգեզուրի պղնձամուլիբդենային կոմբինատի (ՉՊՄԿ) գլխավոր տնօրենի առաջին տեղակալ Վարդան Չհանյանը:



այլընտրանքային էներգետիկայի գրեթե բոլոր ճյուղերում: Առաջիկա տասնամյակների ընթացքում սպասվում է մոլիբդենի պահանջարկի և գների աճ», - հավելել է Հանքագործների և մետալուրգների միության նախագահը:

Հանքարդյունաբերության զարգացման հիմնախնդիրները

Երբ հասարակության լայն շերտերը չեն հասկանում կամ չեն ուզում հասկանալ, որ հանքարդյունաբերության զարգացումը բերում է երկրում սոցիալական վիճակի ընդհանուր զարգացման, դա լրջագույն խնդիր է: Այդ նկատառումով՝ Չհանյանը գիտության, բիզնեսի, լրատվամիջոցների և պետության ներկայացուցիչներին հորդորել է այս հարցին օբյեկտիվ մոտենալ. «Մենք ցանկանում ենք լինել զարգացած, հզոր, ամվտանագ երկիր, թե՛ հուզական, սուբյեկտիվ պատճառներով ուզում ենք հրաժարվել տնտեսական աճի հեռանկարներից»:

Չհանյանը հայտնել է, որ ՉՊՄԿ հիմնական սեփականատերը մտադիր է մաքուր պղնձի արտադրություն հիմնել, այս հարցը համաձայնեցված է կառավարության հետ, և արդեն իսկ առաջընթաց կա: Սակայն, երբ քննարկում է՝ արտահանել խտանյո՞ւթ, թե՛ մաքուր պղնձ, պետք է հասկանալ, թե ինչ արդյունքի է դա հանգեցնելու: Մաքուր պղնձի (որը Հայաստանը ցանկանում է ստանալ) գնի և ներկայում արտահանվող խտանյոթի գնի միջև տարբերությունը ընդամենը 5 տոկոս է կազմում: Այդ ավելացված արժեքում ներառված են նաև ծախսերը:

Այս առևտրային ևս կոչ է արել մաքուր պղնձի արտադրության մեջ հաշվի առնելու վտանգները, դրանց թվում՝ բնապահպանական ռիսկերը: «Բացի դրանից, Չինաստանը, պատկերավոր ասած, «սպանում» է շուկան և այնտեղից դուրս մղում բոլոր մյուս երկրներին: Ելնելով այդ հանգամանքից՝ արտադրության ավելացումն ավելի շոգափելի ազդեցություն կունենա, քան պղնձաձուլարանի ստեղծումը», - նշել է նա:

Մասնագետը հավելել է, որ երկարաժամկետ հեռանկարում ֆերոմոլիբդենի զարգացումը Հայաստանում ներուժ չունի, չնայած այն հանգամանքին, որ Երևանում ձեռնարկությունների ներկա խնդիրները ժամանակավոր են:

Հանքագործների և մետալուրգների միության նախագահը ՀՀ կառավարության կողմից ՉՊՄԿ-ում բաժնետոմսերի ձեռքբերումը դրական երևույթ է անվանել, քանի որ դա հնարավորություն է ընձեռում հանրությանը, աշխատակիցներին և կառավարությանը համոզվելու, որ սա «անհասկանալի» ոլորտ չէ՝ մեծացնելով հասարակության վստահությունը ոլորտի նկատմամբ:

«Որքան հիշում եմ, ՀՀ վարչապետը կառավարության այս քայլը ժամանակավոր միջոց է անվանել, քանի որ չի լուծվել ոլորտի նկատմամբ հանրային վստահության բարձրացման հարցը, որից հետո այդ մասնաբաժինը վաճառքի կհանվի: Ոլորտի նկատմամբ կառավարության վերաբերմունքի մասին ոչինչ չգիտենք: Այսինքն, պարզ չէ՝ մեր արդյունաբերությունը ռազմավարական նշանակություն ունի», թե՛ ոչ: Առայժմ հստակ դիրքորոշում չի ուրվագծվել: Սա հասկանալը կարևոր

նշանակություն ունի բիզնեսի վարքագծի տեսանկյունից՝ նույն երկրաբանական հետախուզական աշխատանքների հարցում, որոնք կարգին չեն էլ անցկացվում: Հայաստանի հազվագյուտ մետաղների ներուժը գնահատելու համար անհրաժեշտ է երկրաբանական հետախուզական լայնածավալ աշխատանքներ իրականացնել: Հուսով եմ՝ կառավարությունը կկարևորի դրա նշանակությունը, և ներդրումներ կարվեն:

Բիզնեսը պետք է հասկանա՝ արժե՞ ապավինել կառավարության աջակցությանը, թե՞ պետք է հույսը դնել սեփական ռեսուրսների վրա: Հաշվի առնելով, որ այս ոլորտում փոխհատուցումը երկարաժամկետ բնույթ ունի, պետք է հասկանալ՝ պետությունը նվազեցնո՞ւմ է ռիսկերը, թե՞ ոչ: Մենք դրական ազդակներ ենք տեսնում մի քանի տարի առաջ ոլորտի զարգացման ռազմավարությունը որդեգրած կառավարության կողմից, բայց, միևնույն ժամանակ, այդ դիրքորոշման հստակ դրսևորում չկա», - ասել է Չհանյանը:

Ինչո՞վ է կարևոր կայուն զարգացման՝ բնապահպանական, սոցիալական և կորպորատիվ կառավարման (ESG) ծրագիրը

Հանքարդյունաբերական ընկերությունները գործում են միջազգային շուկայում, որտեղ շատ խիստ պահանջներ են գործում, և եթե ընկերությունները դրանք չկատարեն, նրանք դուրս կմղվեն շուկայից:

«Ջանի որ սա երկարաժամկետ ոլորտ է, այս ոլորտի ընկերությունները կայուն զարգացման ասպեկտը չեն կարող անտեսել: Չանգեզուրի պղնձամուլիբդենային կոմբինատը՝ որպես ոլորտի խոշորագույն ձեռնարկություն, մեծ նշանակություն է տալիս ESG-ին և ոլորտի մյուս ընկերությունների համար ձգտում է օրինակ դառնալ», - ընդգծել է Չհանյանը:

Արդեն երրորդ տարին անընդմեջ գործարանը կայուն զարգացման տարեկան հաշվետվություն է հրապարակում՝ նկատի ունենալով լավագույն համաշխարհային չափանիշները, ինչպես նաև ձգտում է ապահովել, որ ընկերության սպառած ամբողջ էներգետիկայի մասը արտադրվի «կանաչ» էներգիայի միջոցով:

«Չանգեզուրի պղնձամուլիբդենային կոմբինատը հայտարարել է, որ 100 ՄՎտ հզորությամբ արևային էլեկտրակայանի կառուցման հայտ է ընդունում: Սա աննախադեպ է, քանի որ Հայաստանի այդքան խոշոր արևային կայան չունի: Բայց անգամ այս ամենով հանդերձ՝ այն կապահովի կայանի էլեկտրաէներգիայի պահանջարկի միայն 21%-ը:

Հետևաբար պետք է ձգտենք նրան, որ, օգտագործելով էլեկտրաէներգիայի կուտակման սարքերը, հասնենք 100%-անոց արդյունքի: Սա խթան կլինի, որ ամբողջ երկիրն ինչ-որ պահի ամբողջությամբ «կանաչ» էներգիայի անցնի: Մենք նման ներուժ ունենք, և դրա իրականացումը ներկրվող էներգառեսուրսներից կախվածությունից ազատվելու հնարավորություն կընձեռի», - եզրափակել է ՀՀ հանքագործների և մետալուրգների միության նախագահը:

ECONOMIX

«Ողջունում ենք հայաստանյան բանկերից Ամուլսարի ոսկու հանքավայրի շահագործման համար վարկեր ներգրավելու համար մինչև 150 միլիոն դոլարի բյուջետային երաշխիքներ տրամադրելու՝ Հայաստանի կառավարության որոշումը», - նշել է նա:

Չհանյանը պարզաբանել է, որ դա հնարավորություն կընձեռի նվազեցնելու արդյունաբերական ոլորտի ռիսկերը և ներդրողների տրամադրության համար կարևոր նշանակություն ունի: Նրա տվյալներով՝ արտադրությունը կսկսվի մոտ մեկ տարուց:

Նա ավստանալ է հայտնել, որ ժամանակին օրինակելի նախագծի իրականացումը կատարելի է:

Հանքարդյունաբերության ազդեցությունը կենսամակարդակի վրա

«Մեր ոլորտն անչափ կարևոր է, և ոչ ոք չի կարող գերազնահատել դրա կարևորությունը: Տնտեսության վրա տեսանելի ազդեցությունների շարքում կարելի է առանձնացնել հարկերը, ՀՆԱ-ի տեսակարար կշիռը և այլ ճյուղերի վրա ազդեցությունը: Բայց տնտեսության վրա անտեսանելի ազդեցություն էլ կա: Սա Հայաստանում միակ ոլորտն է, որտեղ համաշխարհային ցուցանիշների հետ համեմատելի աշխատանքի արտադրողականության բարձր մակարդակ է նկատվում», - նշել է Չհանյանը:

Երկրի սոցիալական վիճակը, զարգացման ընդհանուր մակարդակը, մարդկային զարգացման ինդեքսը կախված են աշխատանքի արտադրողականությունից: Միաժամանակ, արտադրողականության բարձր մակարդակով երկրներում մարդկային զարգացման բարձր ցուցանիշ էլ կա, այսինքն՝ նման երկրներում մարդիկ ավելի բարեկեցիկ են ապրում, քան մյուս երկրներում: Նա շեշտել է՝ Հայաստանի տարբեր մարզերում նույնիսկ այդ տարբերությունը կա:

«Չարգացած հանքարդյունաբերություն ունեցող Սյունիքի մարզի սոցիալական վիճակն ավելի լավ վիճակում է Շիրակի մարզի համեմատ, որտեղ նման արդյունաբերություն չկա: Եթե Հայաստանի այլ մարզերում էլ հանքարդյունաբերությունը զարգանա, ամբողջ հանրապետությունում ևս տնտեսության մրցունակությունը կբարձրանա», - նշել է մասնագետը:

Ուրիշ ի՞նչ ոլորտների հետ է կապված հանքարդյունաբերությունը

Հանքարդյունաբերությունը սերտորեն կապված է գրեթե բոլոր ոլորտների հետ: Ամմիջական կապ կարելի է գտնել էներգետիկայի հետ, քանի որ էլեկտրաէներգիայի մոտ 30-40%-ը սպառում է հանքարդյունաբերությունը, ընդգծել է Չհանյանը:

Հայաստանի լեռնահանքային արդյունաբերության խոշորագույն ընկերությունը՝ Չանգեզուրի պղնձամուլիբդենային կոմբինատը (ՉՊՄԿ) հանրապետությունում էլեկտրաէներգիայի սպառման առաջատարն է: Եներգիայի այլ աղբյուրների (դիզելառեկտիվ, բենզին, գազ) դեպքում ոլորտը ևս կարևոր սպառող է:

«Հանքարդյունաբերությունը շոգափելի ազդեցություն ունի նաև տրանսպորտի ոլորտի վրա: «Հարավկովկասյան երկաթուղու» գլխավոր գործընկերը մեր ոլորտն է, առանց որի ընկերության շահույթը կարող էր մի քանի անգամ կրճատվել», - հայտարարել է նա:

Կարելի է բազում նման օրինակներ բերել: Առանց հանքարդյունաբերության մյուս ոլորտները չափազանց թույլ վիճակում կհայտնվեն կամ չեն կարողանա շահութաբեր գործունեություն ծավալել:

Հայաստանի ներուժը համաշխարհային շուկայում

Չհանյանը հայտնել է, որ հանքարդյունաբերական ոլորտը էներգետիկայի հետ մեկտեղ այն ճյուղերից մեկը դարձավ, որը ոչ միայն չտուժեց ԽՍՀՄ փլուզման հետևանքով, այլև ավելի զարգացավ:

«Ընդ որում, հանքարդյունաբերական ոլորտի ամբողջ ներուժը չի օգտագործվում, իսկ դա հանգեցնում է նրան, որ համաշխարհային հանքարդյունաբերության ոլորտում մեր դերն այնքան էլ բարձր չէ: Հայաստանն արտադրում է համաշխարհային պղնձի ընդամենը 0,2-0,3%-ը: Ոսկու դեպքում մեր մասնաբաժինը համաշխարհային շուկայում էլ ավելի փոքր է: Ընդ որում, պղնձի համաշխարհային շուկայի ծավալը նավթի շուկայից 10 անգամ փոքր է: Այսինքն՝ Հայաստանը, չնայած առկա ներուժին, համաշխարհային շուկաներում այնքան էլ տեսանելի չէ: Բայց նույնիսկ այս պարագայում ոլորտը Հայաստանի տնտեսության մեջ կարևոր դեր է խաղում: Ընդամենը, հարկ է նշել, որ նավթի դերը ժամանակի ընթացքում նվազելու է, մինչդեռ պղնձի դերը մեծանալու է: Բոլոր կանխատեսումներով՝ 10-15 տարի անց ռեսուրսների շուկայում պղնձը կարող է փոխարինել նավթին: Այսինքն՝ պղնձն իր արժեքով ու նշանակությամբ ավելի կարևոր կլինի, քան նավթը:

Հայաստանը, ունենալով նման պաշարներ, պետք է օգտվի դրանից և մեծացնի դերը պղնձի համաշխարհային շուկայում՝ ավելացնելով արտադրության ծավալները: Պղնձի պահանջարկի աճի հետ մեկտեղ այս մետաղի գները ևս կբարձրանան: Նման պարագայում ոլորտը կարող է շատ ավելի մեծ ազդեցություն ունենալ տնտեսության վրա, քան հիմա: Նույն պոտենցիալն է մոլիբդենի պարագայում, որն օգտագործվում է նաև



Կապանում բացվեց «Թումո» ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոնը

1957 թվականին կառուցված Կապանի երկաթուղային կայարանի պատմական շենքը վերածնվել է նոր առաքելությամբ՝ որպես «Թումո» ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոն, որի պաշտոնական բացումը մարտի 2-ին ազդարարել են Կապան համայնքի ղեկավար Պարոյանը, Հայաստանում ԵՄ պատվիրակության ղեկավար, դեսպան Վասիլիս Մարագոսը և «Թումոյի» գործադիր տնօրեն Մարի Լու Փափագյանը:

վորությամբ քաղաքացու Գաել Պերդրիոյի, ինչպես նաև բարձրաստիճան պաշտոնյաներ, հյուրեր, «Թումոյի» շրջանավարտ-աշխատակիցներ, կենտրոնի ներկա ու ապագա ուսանողներ:

«Այս օրը մեզ համար իրապես կարևոր և իրադարձային է, քանի որ գտնվում ենք մի վայրում, որը երկար տարիներ ծառայել է ոչ միայն պարզապես տրանսպորտային հանգույց, այլև նպաստել է ողջ տարածաշրջանի տնտեսական և մշակութային վերելքին:

Մենք ուրախ ենք, որ հենց այս շենքում է դրվում մեզ համար ռազմավարական նշանակություն ունեցող տնտեսության ճյուղերից մեկի՝ տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման սկիզբը», -

ելույթի իր խոսքում ասել է համայնքի ղեկավարը: Վերջինս հույս է հայտնել, որ կրթական այս փորձառությունը կօգնի երիտասարդներին ու պատանիներին՝ տարիներ անց բացահայտելու Կապանի դեռևս չբացահայտված ներուժը՝ դրանով իսկ կերտելով Կապանի վաղվա օրը:

Պաշտոնական բացումից հետո հյուրերը շրջել են կենտրոնում, զուգահեռ ծանոթացել ստեղծված պայմաններին, տեղում իրականացվող մադատպագրության տեխնիկական նրբություններին, ինչպես նաև հնարավորություն ունեցել թվայնացման ծրագրով հիանալի Սյունիքի պատմական հուշարձաններով:

Տոնական օրը եզրափակվել է բարեկեցիկության դիմակահանդեսով, լարախաղացի, «Որոտնա» ազգային երգ ու պարի խմբի և «Կաթիլ» ֆոլք բենդի տպավորիչ կատարումներով:

«Թումո Կապանը» կկապի Սյունիքի հարավային համայնքները, ներառյալ Մեղրիի և Քաջարանի «Թումո» տուփերը՝ 2000 սյունեցի պատանիների համար հասանելի դարձնելով «Թումոյի» նորարարական կրթական ծրագիրը: Կենտրոնը կունենա լիարժեք հագեցած կրթական տարածք «Թումոյի» ուսանողների համար, ինչպես նաև՝ տեխնոլոգիաների և դիզայնի ոլորտներում ձեռներեցությունը խթանելու համար անհրաժեշտ պայմաններ: Կենտրոնը, Մեղրիի և Քաջարանի «Թումո» տուփերի հետ կրթական ցանց կազմելով, կծառայի շուրջ 2500 պատանիների:

«Թումո Կապան» նախագիծն իրականացվել է Կապանի համայնքապետարանի և «Սիմոնյան կրթական հիմնադրամ»-ի հետ համատեղ՝ Հայաստանում Եվրոպական Սիոլոյի ֆինանսավորմամբ: Ծրագրին աջակցել են նաև Թումոյի դուրսերը Տուրիս Սարյանը և Վիկտոր Չարուգյանը:

* * *

«Թումո Կապան»-ի բացման և «Թումո»-ի այլ նախագծերի մասին նախօրեին՝ փետրվարի 28-ին, «Այոնյաց երկիրը» գրուցել էր կենտրոնի ղեկավար Անուշ Մեծյունյանի հետ:

– Ինչո՞ւ է կարևոր «Թումո Կապան»-ը:
– Սյունիքը ռազմավարական նշանակություն ունի թե՛ Հայաստանի, թե՛ «Թումո»-ի

համար, և մեր նպատակն է «Թումո»-ի կրթական մոդելը հասանելի դարձնել մարզի բոլոր պատանիներին և աղջիկներին: Այս նպատակին հասնելու ճանապարհը սկսել ենք մեկ «Թումո» տուփից՝ հասնելով մինչև կրթական հանգույց: Սյունիքում առաջին տուփը բացեցինք Կապանում 2021 թվականին, իսկ այժմ արդեն ունենք մարզի հարավում մեր կրթության հասանելիությունն ապահովող կրթական ցանց՝ «Թումո» տուփեր Մեղրիում ու Քաջարանում և Կապանի կենտրոնը, որը մինչև շենքի բացումը ժամանակավոր գործում է վեց տուփերից բաղկացած կենտրոնում: Ցանցը գործում է հետևյալ կերպ՝ փոքր համայնքներում ուսանողներն անցնում են ինքնուսուցման փուլերը, իսկ դասընթացներին և աշխատարաններին մասնակցելու համար գալիս են մեծ կենտրոն, այս դեպքում՝ Կապան:

Շենքի բացումը մեզ հնարավորություն կտա ավելի շատ ուսանողներ ներգրավել, ինչպես նաև հետաքրքիր հնարավորություններ կստեղծվեն համայնքի համար: Կործեն տեխնոլոգիաների և դիզայնի ոլորտներում ձեռներեցությունը խթանող ծրագրեր:

Այս հավակնոտ ծրագիրը հնարավոր դարձավ «Թումո»-համայնք-ԵՄ արդյունավետ համագործակցության և մեր հավատարիմ բարերարներ Տուրիս Սարյանի և Վիկտոր Չարուգյանի շնորհիվ:

– Ինչո՞ւ է «Թումո»-ն ընտրել Կապանի կայարանի շենքը:

– «Թումո»-ն մշտապես կարևորել է պատմամշակութային ժառանգության պահպանությունը, ուստի պատահական չէ, որ մեր կենտրոնը պաշտոնապես բացվում է կայարանի շենքում, որը Կապանի ամենանշանավոր ճարտարապետական կառույցներից է: «Թումո Կապանի» ճարտարապետական դիզայնի շուրջ մենք համագործակցել ենք փարիզյան Normal Studio-ի հետ, որը հայտնի է իր նորարարական ու համարձակ լուծումներով: Կայարանի շենքը, որ երկար տարիներ լքված էր, ինամբով վերանորոգվել է: Մենք պահպանել ենք պատմական շունչն ու հմայքը և հավելել նորարարական կրթական տարածքներ ու պայմաններ:

//

Մարզկենտրոն Կապանում բացվեց Սենթ-Էթիենի անվան ֆրանկոֆոն կենտրոն

Կապան համայնքի ղեկավար Պարոյանի նախաձեռնությամբ մարտի 3-ին պաշտոնապես իր դռներն է բացել Սենթ-Էթիենի անվան ֆրանկոֆոն կենտրոնը: Կապան-Սենթ-Էթիեն քաղաքների միջև բարեկամական հարաբերությունների հաստատման առաջին գործնական քայլն արված է:

կարևորությունը, համայնքի ղեկավարը վստահություն է հայտնել, որ այն իր գործունեությամբ խթանելու է ֆրանսերեն լեզվի ուսուցումն ու տարածումը և կապանցի երեխաները, այդ թվում՝ երիտասարդներն ու մեծահասակ ընթերցողները հնարավորություն են ունենալու հարողակից լինելու ֆրանսիական հարուստ գրականությանն ու բարձրաճաշակ մշակույթին:

Շնորհավորական խոսքով դիմելով ներկաներին՝ Գաել Պերդրիոն, մասնավորապես, ասել է. «Թող այս կենտրոնը դառնա նոր



հնարավորությունների, շփման և առաջընթացի վայր: Թող այն լինի մեր բարեկամության արտահայտությունը, մի կամուրջ, որը կապում է մեր պատմություններն ու մեր ապագան: Եվ ինչպես մի հայտնի երգում է աս-

վում, որին համայնքի ղեկավարն արդեն բաջատեղյակ է. «Սենտ-Էթիենից մինչև Կապան մեզ ոչինչ չի բաժանի, ձեռք ձեռքի տված մենք կգնանք ավելի հեռու, հեռու»:

Հյուրերին ֆրանսերեն երգով ու ասմունքով ողջունել են նաև Ձագիկավանի միջնակարգ դպրոցի աշակերտները՝ ուսուցչուհի Արփիլեն Չեյնալյանի ղեկավարությամբ: Այնուհետև հյուրերը շրջել են կենտրոնում, ծանոթացել ստեղծված պայմաններին և մատուցվող ծառայություններին:

Այս նշանակալի օրը սկիզբ է դրվել ևս մեկ համագործակցության՝ Կապանի ակումբագրարարանային միավորման և հայ համայնքի Alliance Franco-Armenienne de la Loire ասոցիացայի միջև, որն ամրագրվել է հուշագրի ստորագրմամբ:

Լշենք, որ Սենթ-Էթիենի անվան ֆրանկոֆոն կենտրոնը նորոգվել է 2023 թվականի սուրբվեցին ծրագրի շրջանակում՝ համայնքապետարանի համաֆինանսավորմամբ, իսկ գույքի ձեռքբերման հարցում համայնքին աջակցել է «Չանգեզուրի պղնձամուլիբդենային կոմբինատ» բարեգործական հիմնադրամը:

04.03.2025



«Մեզ՝ հայերիս համար Ֆրանսիան, իհարկե, մի երկիր է, որի հանդեպ մենք առանձնահատուկ ջերմ զգացումներ ունենք: Ինչպես արդեն բազմիցս նշվել է, հայերը ֆրանսիացիների հետ կապված են պատմության խորքից եկող բարեկամությամբ, որը հիմնված է համընդհանուր արժեքների, փոխադարձ հարգանքի և վստահության վրա: Այսօր ուրախությամբ եմ արձանագրում, որ այդ հարաբերությունները չեն սահմանափակվել միայն պետական մակարդակով, այլ դրսևորվել են նաև մեր համայնքների միջև համագործակցությամբ, որը մեզ համար չափազանց արժեքավոր է», - իր ելույթում ասել է Պարոյանը:

Հատկապես ընդգծելով կենտրոնի

Լերմոնտովի՝ հայոց Շուշի կատարած այցի մասին

Ռուս բանաստեղծ, դրամատուրգ, արձակագիր և նկարիչ Միխայիլ Յուրիևի Լերմոնտովը ծնվել է 1814 թվականին հոկտեմբերի 3 (15)-ին Մոսկվայում՝ պաշտոնաթող կապիտանի ընտանիքում։ Երեք տարեկանում զրկվել է մորից, դաստիարակվել տատի՝ Ելիզավետա Ալեքսեևնա Արսենևայի մոտ։ Մանկությունն անցել է Պենզայի նահանգի Տարխանի (այժմ Լերմոնտովո) գյուղում, մի քանի անգամ տատի հետ եղել է Կովկասում։

1827 թվականին տեղափոխվել է Մոսկվա, սովորել համալսարանին կից պանսիոնում, ապա՝ համալսարանում (1830-1832)։ Ընդհարվելով հետադեմ դասախոսների հետ՝ Լերմոնտովը կիսատ է թողել ուսումը, փոխադրվել Պետերբուրգ, սովորել յուրկերական հեծելազորային դպրոցում (1832-1834)։ 1834 թվականից մինչև կյանքի վերջը (հուլիսի 15 (27) 1841 թ.) եղել է զինվորական ծառայության մեջ։

Լերմոնտովը 1828 թվականից և մինչև 1832 թվականը գրել է մոտ 300 բանաստեղծություն, ինչպես նաև երկու տասնյակ պոեմ («Կովկասի գերին», «Վերջին զավակն ազատության», «Իզմայիլ Բեյ», «Մահվան հրեշտակ»), մի քանի դրամա («Իսպանացիներ», «Մարդիկ և կրեթեր», «Տարօրինակ մարդը»)։

Լերմոնտովը 19-րդ դարի ռուս հեղափոխական ռոմանտիզմի վերջին խոշորագույն ներկայացուցիչն էր, դեկաբրիստի ավանդույթների շարունակողը։ «Վաղիմ» (1832-1834) անավարտ վեպում պատկերել է գյուղացիության տարերային ըմբոստացումը, իսկ «Դիմակահանդես» (1835) չափածո դրամայում արիստոկրատական վերնախավի հետ չհաշտվող, ընդվզող և կործանվող հերոսի (Արբենին) ողբերգական կերպարը։

Լերմոնտովի ճակատագրի և ստեղծագործության մեջ շրջադարձային կետ եղավ Պուշկինի սպանության առթիվ գրված «Պոետի մահը» (1837) բանաստեղծությունը։ Նա աքսորվեց Կովկաս, որտեղ պետք է մասնակցեր լեռնեցիների դեմ ռազմական գործողություններին։

Լերմոնտովի կյանքի վերջին չորս տարիներն անցան Կովկասի տարբեր վայրերում, որտեղ նա երկրորդ անգամ աքսորվեց 1840 թվականի սկզբներին։ Այդ շրջանում Լերմոնտովը գրեց իր լավագույն գործերը։ «Երգ... Կալաշնիկովի մասին» (1838) պոեմում, օգտագործելով ռուսական բիլինաների ոճն ու մոտիվները, ստեղծեց ազատության և մարդկային արժանապատվության համար մարտնչող հերոսի կերպար։ Լերմոնտովի հեղափոխական ռոմանտիզմի բարձրակետը եղան «Մծիրի» (1839) և «Դև» (1829-1841) պոեմները։ Այս, ինչպես և «Փախստականը», «Չաջի Աբրեք» և այլ պոեմներում, մի շարք բանաստեղծությունների ու բալլադների մեջ դեպքերը ծավալվում են կովկասյան բնության ֆոնի վրա։ 1838-1839 թվականներին Լերմոնտովը գրեց «Մեր ժամանակի հերոսը»՝ ռեալիստական վեպը, որի գլխավոր հերոսը՝ Պեչորինը, իրականության հետ չհաշտվող, իր «հոգու անընդհանրելի ուժերի» համար ասպարեզ չզտնող, տառապող և շրջապատին տառապանք պատճառող անհատ է։ Չոգեբանական և սոցիալական հարցադրումների խորությունը, սյուժեի և կերպարների հարստությունը, ձևի ու ոճի սեղմությունը, կառուցվածքային կատարելությունը վեպը դասում են համաշխարհային արձակի նվաճումների շարքը։

Վերջին անգամ 1841 թվականի գարնանը Կովկաս աքսորված Լերմոնտովը սպանվեց մայրո Ն. Մարտիևիկի հետ մենամարտում, մինչև այժմ լրիվ չայլարված հանգամանքներում։ Լերմոնտովի պոեզիան և արձակը հզոր ներգործություն ունեցան ռուս գրականության հետագա զարգացման վրա։

Մեծ եղավ Լերմոնտովի ազդեցությունը նաև հարևան ժողովուրդների, այդ թվում և հայ գրականության վրա։ Նրա երկերի հայերեն թարգմանությունը սկսվել է անցյալ դարի 1840-ական թվականներից (Յ. Յամբուկյանի, Մ. Նալբանդյանի, Ս. Նազարյանի, Ռ. Պատկանյանի, Մ. Ասղաթյանի թարգմանությունները)։ Լերմոնտովի ստեղծագործությունները թարգմանել են նաև Ա. Ծատուրյանը, Գ. Թումանյանը, Ե. Չարենցը, Ն. Չարյանը, Պ. Սևակը, Վ. Գեորգյանը, Վ. Յովակիմյանը և ուրիշներ։ Յայ կերպարվեստում լերմոնտովյան թեմաներով կտավներ են ստեղծվել Գ. Այվազովսկին, Վ. Սուրենյանցը, Գ. Բաշինջադյանը, Մ. Սարյանը, երաժշտության մեջ՝ Ա. Սպենդիարյանը («Երեք արմավենի»), Ա. Խաչատրյանը («Դիմակահանդես»)։



«Բանաստեղծ Միխայիլ Յուրիևի Լերմոնտովի դիմանկարը», հեղինակ՝ Պյոտր Եֆիմովիչ Չարոլոցկի

Յայաստանի գրողների միությունում կայացած հանդիպման ժամանակ Չախարովը հույս հայտնեց, որ հայ պատմաբանները տեղի արխիվներում տեղեկություններ կփնտրեն այն մասին, թե ինչպիսի գործասեր կային Շուշիում 1837 թ. հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին, որոնցում կարող է հայտնված լինել Լերմոնտովը։



համար գրված երաժշտությունը)։ Յայ թատրոնում Արբենինի դերում հանդես են եկել Պ. Ադամյանը, Վ. Փափագյանը, Վ. Վաղարշյանը։

Յայ նշանավոր անհատներից գատ, ովքեր դասավանդել են Շուշիում կամ պարզապես այցելել այդ գողտրիկ քաղաքը, Շուշիում են եղել օտարազգի հայտնի մարդիկ ևս։ Պարզապես որպես մշակութային կենտրոն՝ Շուշին հետաքրքրում էր եվրոպացիներին և տարածաշրջանում ապրող մեր հարևաններին։ Մասնավորապես, քչերին է հայտնի, որ 1837 թվականին ռուս մեծ բանաստեղծ Միխայիլ Լերմոնտովը եղել է Շուշիում։ Իր բարեկամ Սվյատոսլավ Ռասսկոլն հասցեագրած նամակներից մեկում բանաստեղծը գրում է. «Այն օրվանից, ինչ դուրս եկա Ռուսաստանից, Կազլյարից մինչև Թաման անցել եմ լեռներով, եղա Շուշի քաղաքում, Կուբա, Շամախի, Կախեթ քաղաքներում... Գիշերել ենք բաց դաշտում, աղվեսների ոռնոցների տակ, խմել Կախեթի գինի»։

Յանրախայտ է, որ Լերմոնտովն աքսորվել էր Նիժնեգորոյան դրագունյան գունդ՝ Պուշկինի զոհվելուն նվիրված բանաստեղծություն գրելու համար։ Այս նամակը Թիֆլիսից ուղարկվել էր Պետրոգրադից՝ Սվյատոսլավ Ռասսկոլն։

Մեկնաբանելով այդ նամակը՝ Իրակլի Անդրոնիկովը գրում է. «Արդեն որերորդ անգամ ման էի գալիս Շուշիի փողոցներով՝ հիշելով պատմաբան Վլադիմիր Չախարովի «Լերմոնտովը 1837 թ. Ղարաբաղում» գիրքը։ Եվ այնպես էի

ցանկանում գտնել այն տնակը, որում իջևանել էր բանաստեղծը և փորձել պատկերացնելու Նրա կենցաղը, Նրա գրույցը տեղացիների հետ, լսել տարեցների խոսքը, որոնց նախորդները բերանից բերան փոխանցել են ռուս բանաստեղծի մասին լեզենդները»։

Այդ, փաստաթղթերի սղությունը մեզ լրացուցիչ տեղեկություններ չեն տալիս, թե ինչու Լերմոնտովը հայտնվեց Ղարաբաղում։ Բայց պահոցներում կարելի է գտնել ոչ քիչ հետաքրքիր փաստաթղթեր, որոնք լույս կսփռեն Անդրկովկասում բանաստեղծի այցելելու մասին նվազ ուսումնասիրված ժամանակաշրջանի վրա։

Յայաստանի գրողների միությունում կայացած հանդիպման ժամանակ Չախարովը հույս հայտնեց, որ հայ պատմաբանները տեղի արխիվներում տեղեկություններ կփնտրեն այն մասին, թե ինչպիսի գործասեր կային Շուշիում 1837 թ. հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին, որոնցում կարող է հայտնված լինել Լերմոնտովը։

2005 թ. դեկտեմբերի 21-ին Լեռնային Ղարաբաղում էր Մոսկվայի միջազգային հարաբերությունների պետական ինստիտուտի կովկասյան հետազոտությունների կենտրոնի համակարգող Վլադիմիր Չախարովը, ով հանդիպել է ԼՂՀ նախագահ Արկադի Դուկասյանին, հանրապետության կրթության համակարգի մասնագետների և ուսանողների, Շուշիի հասարակայնության ներկայացուցիչների հետ։ Շուշիում ռուս գիտնականը մանրամասներ է ներկայացրել, որոնք ապացուցում են ռուս մեծ բանաստեղծ Միխայիլ Լերմոնտովի Շուշի այցելելու մասին։ «Դա պատմական փաստ է, որ 1837 թ. Լերմոնտովը եղել է այստեղ։ Որքան ժամանակ է անցկացրել, դա չէ կարելիորդ, գլխավորն այն է, որ նա այստեղ եղել է»,- ասաց Վլադիմիր Չախարովը, ով «Կովկասում խաղաղության հաստատման համար» մեղալ շնորհեց ԼՂՀ նախագահ Արկադի Դուկասյանին։

Գիտնականին ցույց տվեցին հյուրանոցը, որտեղ իջևանել էր բանաստեղծը։ Շուշիում կանգնեցվել էր պոետի կիսանդին, որը, ցավոք սրտի, չի պահպանվել։ Այնուամենայնիվ, գտնվեցին ակնատեսներ, ովքեր բավարարեցին լերմոնտովագետի հետաքրքրասիրությունը։ Վլադիմիր Չախարովը հայտնեց, որ նախատեսվում է Լեռնային Ղարաբաղում գիտական նստաշրջան կազմակերպել Լերմոնտովի՝ Շուշի այցելելու թեմայով։ Յնթացս Լեռնային Ղարաբաղի գլխավոր բուհում՝ Արցախի պետական համալսարանում, ռուսաստանցի գիտնականը հանդես եկավ դասախոսությամբ։

ՎԱՅՐԱՍ ՕՐԲԵԼՅԱՆ

ԲԱՆԱՍՏԵՂԻ ԿՐԻՍՏՈՍՄԱՆ ԿԱՅՑՈՒՄԸ ԵՎ ԼԵՐՄՈՆՏՈՎԻ ՆԵՐՎՈՒՄԸ

Կապան-Սենթ-Էթիեն համագործակցությունը զարգանում է մեծ թափով

Մարտի 1-4-ը պաշտոնական այցով Կապան համայնքում է գտնվել Ֆրանսիայի Հանրապետության Օվերն-Ռոն-Ալպ շրջանի Սենթ-Էթիեն քաղաքի պատվիրակությունը՝ քաղաքապետ Գաել Պերրիյոյի գլխավորությամբ:

Այցի հիմնական նպատակը՝ Սենթ-Էթիենի անվան ֆրանկոֆոն կենտրոնի բացման արարողությանը մասնակցելն էր և բարեկամական հարաբերությունների զարգացման հետագա քայլերի պլանավորումը:

Պատվիրակության կազմում ընդգրկված էին Սենթ-Էթիենի քաղաքապետի՝ մշակույթի և միջազգային հարաբերությունների գծով տեղակալ Մարկ Շաստրեն, «Cité du design» կենտրոնի տնօրեն Էրիկ Ժորդանը, միջազգային կապերի բաժնի ղեկավար Սոնիա Սալեն Ղեղիբյան, Սենթ-Էթիենի հայկական միության նախագահ Վրեժ Խոսրովյանը, միության անդամ Պասկալ Դեմիրճյանը, ինչպես նաև քաղաքապետարանի աշխատակազմի այլ ներկայացուցիչներ:

Քառօրյա աշխատանքային այցի ընթացքում հյուրերն այցելել են մարզական, մշակույթի և բժշկական հաստատություններ, ծանոթացել և որոշակի պատկերացում կազմել քաղաքի հնարավորությունների, ներուժի և մատուցվող ծառայությունների մասին: Նրանք եղել են «Հիգեա» բժշկական կենտրոնում, Կապանի գեղարվեստի մանկական և թիվ 2 երաժշտական դպրոցներում, մանկական կենտրոնում, մշակույթի և երիտասարդական կենտրոններում, Էլեկտրոնային գրադարանում, գեղանկարիչ Ռուբեն Կոստանյանի/Ուբակ/ արվեստանոցում և Սյունիք ֆուտբոլային ակումբի մարզաբազայում:

Պատվիրակության անդամները հատկապես մեծ հետաքրքրություն են դրսևորել գեղարվեստի դպրոցի նկատմամբ՝ ցանկություն հայտնելով տեղայնացնել լավագույն փորձը և նման դպրոց բացել նաև Սենթ-Էթիենում:

Համագործակցության զարգացման նպատակով տեղի են ունեցել համայնքների ղեկավարների առանձնազրույց, պաշտոնական և աշխատանքային թիմերի միջև հանդիպումներ, որոնց շրջանակում քննարկվել են փորձի փոխանակման և համատեղ նախագծերի իրականացման, ինչպես նաև երկու քաղաքներում իրականացվող



միջոցառումներին համատեղ մասնակցության ապահովման հնարավորությունները:

Հանդիպումների արդյունքում ձեռք են բերվել պայմանավորվածություններ և նախանշվել առաջիկա քայլերը՝ մշակույթի, երիտասարդության, սպորտի և առողջապահության ոլորտներում, որոնք երկու քաղաքի հարաբերությունները որակական նոր աստիճանի կբարձրացնեն:

Առաջիկայում սպասվում է համագործակցություն առողջապահության ոլորտում

«Հիգեա» բժշկական և Սենթ-Էթիենի համալսարանական հիվանդանոցային կենտրոնների միջև, որն իրենից ենթադրում է լավագույն փորձի փոխանակման հնարավորություն, բժշկական թիմերի փոխայցելություններ, ինչպես նաև ղեկավարող սարքերի տրամադրում:

Պատվիրակության այցը Կապան եզրափակվել է Գարեգին Նժդեհի անվան հուշահամալիր այցելությամբ:

05.03.2025

«Մեծապատիվ մուրացկանները»՝ Զաջարանի արվեստի դպրոցի բեմահարթակում

Փետրվարի վերջին օրը նշանավորվեց Զաջարանի արվեստի դպրոցի թատերարվեստի բաժնի սաների և ուսուցիչ, բեմադրող ռեժիսոր Արթուր Գաբրիելյանի կողմից Հակոբ Պարոնյանի «Մեծապատիվ մուրացկանները» ստեղծագործության բեմադրության առաջնախաղով:

Արթուր Գաբրիելյանն իր և սաների առաջ բավականին բարդ խնդիր էր դրել՝ բեմահարթակներում բանիցս ներկայացված այս ստեղծագործությունը նորովի մատուցել հանդիսատեսին, սակայն այնպես, որ չկորցնի պարոնյանական շունչը, բարձրացվող խնդիրների սրությունը և ազդեցիկությունը:

Ներկայացման բեմանկարների հեղինակ Նարեկ Իսրայելյանը՝ պահպանելով ստեղծագործության շունչը, ընտրել էր համապատասխան ղեկորացիաները մինիմալիստական, սակայն մաքուր և պատկերը փոխանցող ոճ՝ ընդգծելով կերպարները: Առաջին հայացքից ուշադրություն գրավեցին բեմում գտնվող բազմաթիվ դիմակները: Ինչպես շեշտեց Նարեկ Իսրայելյանը, դա պատահական չէր և միտում ուներ առավել ազդեցիկ ու հասանելի դարձնել ներկայացման ուղերձը հանդիսատեսին:

Ներկայացումից առաջ ողջույնի խոսքով հանդիսատեսին դիմեց բեմադրող ռեժիսոր ու թատերարվեստի բաժնի ուսուցիչ Արթուր Գաբրիելյանը, ով կարևորեց բնագրով՝ արևմտահայերենով ներկայացումը խաղալու գաղափարը, ինչը որոշակի դժվարություններ ստեղծեց սաների համար, բայց երկար ու մանրակրկիտ աշխատանքի շնորհիվ սկսական դերասանները հմտորեն հաղթահարեցին

այն: Բանախոսը շեշտեց նաև, որ թատրոնը սաների համար ինքնարտահայտվելու, ինչպես և մարդկանց ու աշխարհը ճանաչելու միջոց է, ինչը հետագայում շատ կօգնի նրանց՝ ցանկացած մասնագիտությամբ աշխատելու դեպքում:

Թվում է, թե հայտնի դասական ստեղծագործության հերթական, այն էլ ուսուցողական բեմադրությունը, ոչնչով չէր կարող զարմացնել հանդիսատեսին: Սակայն բեմի վրա առկա, ինչպես նաև դերասանների կրած դիմակները յուրահատուկ ու լրացուցիչ իմաստ հաղորդեցին ծանոթ սյուժեին՝ Աբիսողոմ աղային թողնելով մարդկային արտատեսիլի ու մեղքերի հետ միայնակ:

Քաջարանի արվեստի դպրոցի թատերարվեստի բաժնի սաները փայլուն կատարեցին իրենց առջև դրված խնդիրները, իսկ մեզ՝ հանդիսատեսին, մտամ էր միայն հուղընկայս, բուն ծափահարություններով ողողել բեմի սկսնակ դերասաններին:

Ներկայացումը դիտելուց հետո զրույց ունեցանք Արթուր Գաբրիելյանի հետ, ով մասնավորապես ասաց.

«Մեզ համար սա լուրջ նախաձեռնություն էր, նաև համարձակ քայլ՝ դիմել Հակոբ Պարոնյանի «Մեծապատիվ մուրացկանները» ստեղծագործությանը, բանի որ այն դասական արձակի լավագույն գործերից է: Միևնույն ժամանակ, այն բազմիցս բեմադրված ներկայացում է հայ թատրոնում, որը, ցավոք, իր թեմատիկայով դեռևս արդիական է: Պարոնյանը ստեղծագործությունը գրել է 19-րդ դարի վերջին, սակայն մենք այն տեղափոխել ենք 21-րդ դար՝ չխաթարելով հեղինակի ոճը: Պահպանել ենք Պարոնյանի արևմտահայերեն լեզուն, որովհետև հենց այդ լեզվամտածողության մեջ է

ստեղծագործության գեղեցկությունը: Սակայն Զաջարանը, Սյունիքն առհասարակ, հեռու են արևմտահայ մշակույթից, և մեր սաները սկզբում բախվեցին արևմտահայերենի ընկալման դժվարությանը: Բայց կարողացան հաղթահարել այդ խոչընդոտը, ընկալել արևմտահայերենի նրբությունները և ստեղծագործությունը մատուցել նորովի: Սյուժետային առումով մեր ներկայացման մեջ կա մեկ կարևոր փոփոխություն՝ այստեղ ոչ թե ստանձին կերպարներ են փորձում խաբեությունը հարստանալ, այլ գործում է մի ամբողջ համակարգ»:

Օգտվելով առիթից, նրան ուղղեցիք մեզ հետաքրքրող ևս երկու հարց:

– Զանի որ «Մեծապատիվ մուրացկանները» հայ թատրոնում ամենաշատ բեմադրված ներկայացումներից է, արդյո՞ք մտահոգություն կար՝ կապված հանդիսատեսի ընկալման հետ: Ինչպիսի՞ն էր սաների արձագանքը, երբ իմացան, որ պետք է բեմադրեք Հակոբ Պարոնյանի այդ ստեղծագործությունը:

– Հիմնական դժվարությունն այն էր, թե ինչպես մեկնաբանել ստեղծագործությունը: «Մեծապատիվ մուրացկանները» շատ տարբեր բեմադրական լուծումներ է ունեցել, այդ թվում Աճեմյանի հայտնի բեմադրությունը: Կրկնօրինակելը բացառված էր, իսկ ուսումնական բեմում պետք էր գտնել նոր մոտեցում: Երբ հասկացանք, թե ինչպես ներկայացնենք գործը, մտավախությունները վերացան: Սաների համար սկզբում բարդ

էր արևմտահայերենը, շատ բառեր չէին հասկանում, ուստի նախ թարգմանում ու բացատրում էինք, ապա ձևավորում իրավիճակները: Բայց երբ երեխաներն ընկալեցին Պարոնյանի ոճը, նրանց մեջ արթնացավ հետաքրքրությունը, և ամեն ինչ փոխվեց: Պարոնյանի գործերից հաճույք չստանալն ուղղակի անհնար է: Շատ կարևոր մի բան. սա ուսումնական ներկայացում է, և մեզ համար առաջնայինը ոչ թե վերջնական արդյունքն էր, այլ այն, թե ինչ է սովորում երեխան փորձերի ընթացքում: Այստեղ մեր հիմնական նպատակն էր՝ սովորեցնել արևմտահայերենը, զարգացնել լեզվամտածողությունը և օգնել սաներին՝ հասկանալու հասարակական բարքերի խորքային խնդիրները:

– Ըստ ձեզ՝ ի՞նչ տարբերություն կա, երբ ինքը (որպես բեմադրող) նաև խաղում է և երբ միայն բեմադրում է:

– Ինձ ավելի դուր է գալիս խաղալը, քան բեմադրելը: Երբ դու բեմում ես, ամեն ինչ բո վերահսկողության տակ է, ինքը ես որոշում, թե ինչ անել: Բայց երբ բեմադրում ես, ամեն ինչ փոխանցում ես դերասաններին, և եթե ինչ-որ բան չի ստացվում՝ ուղղակի անգոր ես գտնվում: Այնուամենայնիվ, կարևորում եմ, որ յուրաքանչյուր սան գտնի իր գույները, իր խաղաոճը: Երբ տեսնում եմ, որ դա հաջողվում է, հասկանում եմ՝ մեր աշխատանքը ճիշտ ուղիով է ընթանում, և դա մեծագույն ուրախությունն է:

ԻՐԻՆԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Սյունյաց երկիր
ՀԻՄՆԱԴՐԻ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ «ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ» ՍԱՀՄԱՆԱՓՈՎ ՊԱՏԱՍԽԱՆԱՏ-ՎԻԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ: ՏՊԱԳՐՎՈՒՄ Է 2003Թ. ՀՈՎՏԵՄԲԵՐԻ 1-ԻՑ:
Գլխավոր խմբագիր՝ ՍԱՍՎԵՆ ԱՆԷՏՍԱՆՅԱՆ

3301, Սյունիքի մարզ, ք. Կապան, Շահումյան 20/32:
(+374 91) 45 90 47
(+374 77) 45 90 47
syuniacyerkir@mail.ru
www.syuniacyerkir.am

Թղթակցությունները չեն գրախոսվում և հեղինակներին չեն վերադարձվում: Խմբագրության և հեղինակների կարծիքները կարող են չհամընկնել: Երկրորդ ներկայացնել մեքենագիր վիճակում:
«ԳՐՎԱԾԴ» – ԾԱՆՈՒԹՅՈՒՄ» բաժնում
տպագրվող նյութերի համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:
Հղումը «Սյունյաց երկրին» պարտադիր է: Թե նշանի տակ տպագրվում են գովազդային նյութեր: Գրանցման վկայականը՝ 01Մ 000231:

Թերթը տպագրվում է «ԳԻՆԴ-ՏՊԱՐՈՒՆ» ՍՊԸ-ում: Հասցեն՝ 0074, Երևան, Բագրատուկյաց փող., 70ա շենք
Ծավալը՝ 2 տպագրական մամուլ: Տպագրականը՝ 1010, գինը՝ 100 դրամ: Ստորագրված է տպագրության 21.03.2025թ.: